Հովհաննես Թումանյան

Կորած ցնորքներ

Հեծում է մըրրիկն իմ դալար հովտում,
Թոշնել են, թոռմել ծաղկունքն իմ սիրած,
Ձըմեռ է այնտեղ, ձըմեռ՝ իմ սըրտում,
Ու լալիս եմ ես ծաղկունքըս կորած:

Ես ձեզ եմ լալիս, հոգուս ծաղիկներ,
Է՜յ, իմ վաղուցվան սիրուն ցընորքներ,
Եկե՜ք, ետ եկեք, մի անգամ կըրկին
Կյանքով, բուրմունքով լըցրեք իմ հոգին:

Բերեք առաջվան աշխարքն ինձ համար

Արևի շողեր, գարունքվա դալար,
Ջըրերի կարկաչ, հավքերի երամ,—
Իմ հույսերն անհուն, իմ սերն անթառամ
Եվ իմ սիրուհին, որ միայն դուք գիտեք,
Եկե՜ք, ետ եկե՛ք:

Ձեզ ո՞վ հալածեց, ո՞ր դաժան քամին,
Ո՞ր չար թշնամին
Շընչում է մրրրիկն իմ անուշ հովտում.
Թոշնել են վաղուց ծաղկունքն իմ սիրած.
Ձրմեռ է այնտեղ, ձրմեռ՝ իմ սրրտում,

Ծաղիկ ու ցընորք բոլորը կորած...

1899